

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ս. ԱԹՈՌՈՅ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԱՄԵՆԱՊԱՍԻԻ Տ. ԵՂԻՇԷ ՍՐԲ. ԱՐԲԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ԲԱՐԵՆՆԱՄ ՊԱՏՐԻԱՐԺ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՌՈՒՈՅ
ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՏ. ՏՆՈՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի Ս. ԱԹՈՒ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր,

Կը ներկայացնենք Հայրաւային Ամերիկայի Ս. Աթոռայ Նաւիրակութեան, մեր գործին տեղեկագիրքը: Թէև քիչ մը ուշացած, բայց տալիս մեր կամքէն անկախ, սրբոհեաւ Զերդ Բարձր Սրբադնութեան հրահանգով, պարտաւորուած էինք անցնիլ Հիւսիսային Ամերիկայ, հոն սկսելու համար Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան հանգանակութիւնը:

1961 Սեպտեմբեր 15ին հասանք Պաւլոս-Այրէս, ուր սրտաղինս բնդունուեցանք Հայրաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բարդէն Ս. Էպս. Ապատեանէն, Թեմական Ժողովէն, Քահանայական զատէն ու Վարչական Մարմիններէն: Սեպտեմբեր 20ին պաշտօնադէս ներկայացանք Հայրապետական Պատուիրակ Ս. Հօր և Պատ. Թեմական Ժողովին, ուր Զերդ Ամենապատուութեան սղջոյններուն հետ յայտնեցինք մեզի յանձնուած գործին պարագաները, Ս. Աթոռիս կրօնական, կրթական և Ս. Տեղեաց գործունէութիւնը, մեր անտեսական անձկութիւնը, ու կոչ ըրինք որպէսզի Պատ. Թեմական Ժողովը բերէ իր անվերապահ քաջալերութիւնը արդիւնաւորելու համար Ս. Աթոռին համար ըլլալիք նաւիրահաւաքութիւնը: Ապահովելէ յետոյ անոնց աջակցութիւնը, գործի ձեռնարկեցինք, մեկնակէտ ունենալով երկու տուեալներ — Բարոյական և Նրթական:

Առաջինը իրագործեցինք մասնաւորաբար մեր քարոզներով, բանաստեղծութիւններով, մամուլի և ձայնագրութեան ելոյթներով, սլայտներու և ժողովներու ցուցադրութեամբ ետայն: Ու տալիս կրօնա-

կան ու ազգային բոլոր հաստատութիւններէն ու կազմակերպութիւններէն ներս անխափր:

Այս մարզին մէջ մեր նաւիրակութիւնը եղաւ նշանակելի նաւաճում մը, սրբոհեաւ մեզմացաւ մեր անցեալի պայքարներէն: մեր ժողովուրդի հոգիին մէջ յառաջացած դառնութիւնը, ու հաստատուեցաւ սէրն ու գնահատանքը մեր Միաբանութեան Ս. Տեղեաց գործին ու կրթական հաստատութիւններուն — Հայկական Երեսօղէմին —: Այցելած ենք մօտ 2500 տուն, եկեղեցիներ, տկումներ, հաստատութիւններ, օրաց բոլորին փոխանցեցինք Հայկական Երեսօղէմի վսեմ փառքին արդար հպարտանքը: Մեր խօսքին տառնցքը եղաւ Հայութեան ու Հայց. եկեղեցիին երկու լուսարեւոնները. — Ս. Էջմիածին, որպէս Գլուխ Հայց. եկեղեցիին ու անկազբիւր մեր հոգեւոր և ազգային սգեկանութեան, և Ս. Երեսօղէմ, որպէս Սիրար մեր եկեղեցւոյ ու ներշնչարանը հոգեւոր վերացումներու և կրօնական փրկութեան խանդ:

Տարինք բոլորին, Ս. Երեսօղէմի օրհնութիւններուն հետ, մեր հոգեկան ու ազգային արժէքներուն տաք շունչը, սէրն ու կրակը, տառնց անտեսելու կազմակերպուած, ճիս ու բարգաւաճ զաղութներէն սկսած մինչև ամենէն ազգապէս, փառքութիւնը, ամենէն հեռաւորներն ու անտեսուածները: Այս տեսակէտէն յառկանշական եղաւ գիւտը Վէնէզուէլայի մայրաքաղաք Գարագուսի՝ թիւով 500 անձ Հայ Գաղութիւն: Յրուած, իրարմէ անտեսեալ այս հայութիւնը մեր նաւիրակութեան առիթով բերինք քով քովի, պատմեցինք իրենց ազգային ու հոգեւոր

արժէքներէն, հաղորդեցինք գիրքներ Տիրոջ փրկարար Ս. Մարմնով և Արեամբ ու զգացուցինք գիրքներ հովուելու անհրաժեշտ Հայ եկեղեցականին, Հայ եկեղեցւոյ Սրբազան երգիչին անմիջական պէտքը: Այժմ մեզի կը նային տկնկաւոյց, Հոգ. Հովիւի մը տկնկաւութեամբ, սրպէսզի կեանք առայ մտնցուած մեկուսացած այս դառաւ ինչ: Այս մասին օրինակեցինք գիրք Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին և Հորաւ. Ամերիկայի Հայրապետական Պատուիրակին: Ժիզ չխնայեցինք հասնելու համար մինչև հեռուստադիւղբում, թաւով երկուս-երեք Հայ ընտանիքներուն խօսք: Զիրքներ փնտռող Հայ եկեղեցականին անտկնկաւ ներկայութիւնը տալիս էր սիրտ մղկառող պահերու:

Այս դնացրով մենք այցելեցինք Հայրապետին Ամերիկայի հեռեկալ քաղաքներն ու գաղութները. —

ԱՐԺԱԿԻՅԻՆ. —

Պուսկաս — Այրես, ուր ունինք 40,000 հայութիւն, կաղմակերպուած Առաջնորդարան (որ նոյն աստիճանի Եպիսկոպոսարանն է ամբողջ Հարաւ. Ամերիկայի Հայոց. Եկեղեցւոյ թիւին), ութ եկեղեցական, վեց եկեղեցի, 6-7 դպրոցներ, սրանց երկուքը միայն ամբողջօրեայ, մօտ 8-900 աշակերտութիւն, Հայկ. տկուսմբներ, միտութիւններ, Մամուլ (Հայկեդրոն, Արմենիա, Սեբաստիական, Ծարժում և Սեան թերթեր), վերջապէս բուսական միութեամբ կաղմակերպութեամբ Հայութիւն որ անտեսական գեանի վրայ ևս ունի բարգաւաճ կացութիւն:

Քորսոպա, ուր ունինք 2000 Հայ, մէկ եկեղեցի, մէկ քահանայ, մէկ դպրոց ամբողջօրեայ՝ 200 աշակերտներով և երկու տկուսմբներ:

Ռոսսիոյ, ունինք 150 հոգինոց հայ գաղութ, Գաղութային վարչութիւն և Տուն:

ԳՐԱԶԻԼ. —

Սան Փաւլո, ուր ունինք 10,000 հայութիւն, երեք եկեղեցիներ և մատուռներ, երեք եկեղեցականներ, երեք դպրոցներ՝ ամբողջօրեայ, 500 աշակերտներով, միտութիւններ, երկու տկուսմբներ,

անտեսապէս բարգաւաճ Հայութիւն ու թեմական սերսոյն կաղմակերպութիւն:

Ռիօ Ժե Ժանէյրօ, ուր կը գտնուին 100 Հայեր և ունին Գաղութային վարչութիւն, ՌԻՐՈՒԿՈՒԻՅ. —

Մօնթեւիսէօ, Հայութեան թիւն է 10,000: Ունին Ազգային Սրահ մը, որուն գեանայարկը շատ անփութեանակ եկեղեցին է գաղութին, եկեղեցական աղքատ կաղմակերպութիւն, մէկ եկեղեցական, տատակուսմբներ, Միտութիւններ, 4-5 դիւերային անկաղմակերպ վարժարաններ, մէկ ծխական ամբողջօրեայ խեղճ վարժարան, հինգ Հայկ. Ռատիօժամեր, անտեսապէս բարեկեցիկ Հայութիւն:

ՉԻԼԻ. —

Սան Տիակօ, կան 300 Հայեր: Ունին Ազգային Տուն մը որ կը ծառայէ որպէս հաւաքավայր, մատուռ ու դիւերային դպրոց: Ունին Գաղութային վարչութիւն:

ՎԷՆԷԶՈՒԷԼԱ. —

Գաղապա, ուր կայ 500 հոգինոց Հայ Գաղութ, բայց ոչ մէկ Ազգային հաւաքական կեանք և կաղմակերպութիւն:

Մեր տառքիւթեան երկրորդ երեսը եղաւ Տնտեսական-Նիւթական, պէտք է տպահովէինք ժողովրդական նախարարութիւններ «Վասն կարեաց Ս. Աթոռոյ»: Առ այդ մեր դորը խաչածեղ տուեալներ եղան Հարաւային Ամերիկայի երկիրներուն քաղաքական խառնութիւնները, անտեսական տաղնապը ու իրենց դրամին տարապարհակ տնկումը: Սակայն ըրինք մեր լաւագոյնը, ձեռք ձգելու համար կարելի արդիւնաւորութիւնը որ կը ներկայանայ հեռեկալ պատկերով. —

Հանգանակութեան ընդհանուր արդիւնքն է Ամերիկեան Տուար 61,503,00 սէնթ:

Մեր ծախսերու ընդհ. գումարն է Ամեր. Տուար 4,250,00 սէնթ:

Երեսուողէմ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր յախանցած կնք Ամեր. Տուար 56,753,00 սէնթ:

Տ. Բարգէն Եպս. ի մօտ ի պահ Ամեր. Տուար 500,00 սէնթ:

Իսկ հեռեկալը մեր ելեմուտքին մասնաբաժանեալ հաշուեկշիռն է. —

Ծանօթ. Հետեւեկտիւն. —

ա) Արժանիքի ն Գրադիւի գլուխնե-
րու ծախսւց մէկ կարեւոր մասը կատար-
ուած է Հիւս. Ամերիկայի մէջ:

բ) Մեր բոլոր հաշիւները վաւերաց-
ուած և ստորագրուած են իւրաքանչիւր
քաղաքի Հագարարձութիւնէն կամ Թեմա-
կան ժողովէն:

գ) Ունինք մեր կարեւոր ծախսւց հա-
մապատասխան վաւերացրած թղթերը և ստա-
ցադրերը:

դ) Կը խնդրենք Ձերդ Բարձր Սրբազ-
նութիւնէն ևս յատուկ ներկայացուցիչով
մը քննել և վաւերացնել մեր հաշիւները
և արտօնել հրատարակութիւնը:

Նուերեմբ. —

Հնորհակալութեամբ կը յիշատակենք
այս առթիւ՝ նաև հետեւեալ նստիւորաբու-
թիւնները. —

1 ձեռագործի-կարի ելկտրաշարժ մե-
քենայ, Տէր և Տկ. Արիսիւյէն (Պ. Այրէս):

39 մէթր կարմիր թաւիշ, եկեղեցական
շապիկացու ձէրէճեան եղբայրներէ (Պ. Այ-
րէս):

40 մէթր կարմիր թաւիշ, եկեղեցական
շապիկացու Տեարք Նշան Չամիչեանէ և
Մելիք Կիւրճեանէ (Պ. Այրէս):

1 Ս. Աստուածածնի մեծադիր իւզա-
նեղ եկեղեցական սրբապատկեր և 1 կոր-
փուրայ Տիար Վարդան Բարսեղեանէ (Պ.
Այրէս):

150 ներքին շապիկներ ժառնգ. Վար-
ժարանին համար Տիարք Մանուէլ Սարիէն
և Խորխէ Մարկոսեանէն:

50 դոյզ կօշիկ ժառանգ. Վարժարանի
սաներուն համար Էքմէքճեան եղբայրնե-
րէ, Շիշմանեան Ընտանիքէն, Տիար Յա-
րութիւն Գալօղլանեանէ (Պ. Այրէս) և
Տիար Սահիան փիւսֆճեանէն (Ս. Փաւլօ):

Ս. Յակոբեանց Մայր Տաճարին համար,

100 մէթր կանաչ դորդ Մէրկէր-
եան — Սահակեան — Գանիէլեան ըն-
տանիքներէ (Պ. Այրէս),

50 մէթր կանաչ դորդ Խայթ Նզ-
րայրներէ (Պ. Այրէս և Սան Տիակօ),

63 մէթր կանաչ դորդ Տկ. Մարի
Հալաճեանէ և Պ. Այրէսի Հ. Եկե-
ղեցասիրաց եղբայրակցութիւնէն:

100 մէթր լողաւորթ զգեստացու ժառ.
սաներուն, Մեծ. Տեարք Յակոբ Նազարեա-
նէ և իր եղբայրներէն (50 մէթր), Տիշէ-
քէնեան եղբայրներէ, Ս. Բարսեղեանէ և
Սէմէրճեան եղբայրներէ (Սան Փաւլօ):

600 մէթր երեք դոյներով եկեղեցական
շապիկացու, Տեարք Գէորգ Մազսուսեանէ
(400 մէթր), Գառնիկ Պազարեանէ, Վար-
դափառ Փալատեանէ, Վարդգէս Պողոճեանէ
և Նահապետ եղբայրներէ:

Սոյն ապրանքները իրենց արժեքինով
կ'երեւին մեր հաշիւներուն մէջ:

Այս առթիւ դարձեալ շնորհակալու-
թեամբ կը յիշատակենք որ սոյն ապ-
րանքները երեսուղէմ զրկուեցան, շնոր-
հիւ աքնաջան աշխատանքներուն Տեարք
Անդրէաս ձէֆէրեանի և Յովսէփ Եսաւֆ-
եանի, ազգայիններ՝ որոնց եկեղեցանուէր
ծառայութիւնը Ս. Փաւլոյի և Պ. Այրէսի
մէջ վեր է ամէն գնահատանքէ: Սոյն
ազնիւ ազգայինները, հակառակ իրենց
բազմազբազ վիճակին, բերին իրենց աշ-
խատանքի շատ կարեւոր բաժինը նաև մեր
հանգանակութեան դործին ու յայտնաբե-
րեցին երեսուղէմի նկատմամբ բացառիկ
սէր և ծառայութիւն:

Մեր զոհաբերող ժողովուրդին, Ս. Ա-
թոռայ կարեաց հանդէպ ցոյց տուած այս
ազնիւ վերաբերմունքը, կը մղէ մեզ Ձերդ
Բարձր Սրբազնութեան ներկայացնելու
նաև այն կարիքները, որոնց դարմանու-
մին համար անոնք ակնկալաւոր կը նային
երեսուղէմի Առաք. Ս. Աթոռին:

Հարաւային Ամերիկայի մէջ կայ աղա-
ղակող ազնապը պատրաստուած Հողեւոր
Հովիւներու և եկեղեցական կրթական
մշակներու Պաղատադին՝ Հովիւներ կը
խնդրեն ամէն կողմէ, բանալու համար
փակուած եկեղեցիները, բարբառեցնելու
համար լուծ խորանները, հոյեցի ոգե-
կանութեամբ ծաղկեցնելու համար հոյ կըր-
թական հաստատութիւնները: Մեր հա-
տուածական պայքարները, օտար եկեղեցի-
ներու մարդ-սրբապատկական աղաքքիւսածնե-
ական արշաւները և օտար կրթական հա-
ստատութիւններ կը խեղդեն մեր ժողո-
վուրդին կենսունակութիւնը: Արտի ճըմ-
լումով կարելի է գիտել մանաւանդ փոքր

Հաշուեկէիւ Ս. Երուսաղէմի Նուիրակութեան

Հարստային Ամերիկայի մէջ կատարուած Հանգանակութեան

ԻՐԱՆԻԱԿԱՆ ԻՐԱՆԻԱԿԱՆ ԻՐԱՆԻԱԿԱՆ	ՏԵՂԱԿԱՆ ԱՐԺԷՍԱԿԱՆ		ԱՄԵՐԻԿԱՆ ՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ		
	ԻՐԱՆԻԱԿԱՆ	ԵՂԱԿԱՆ	ԻՐԱՆԻԱԿԱՆ	ԵՂԱԿԱՆ	ՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐԺԱՆՈՒՆ (Պաշտօն Արեւ, Թատարի և Բարձրագոյն)					
ԻՐԱՆԻԱԿԱՆ					
Հանգանակութեան բնոյժ. արդիւնք	2,942,199.00		33,250.00		
Նշ					
Թղթակցութիւն և զեւեակներ		8,130.00			
Ման ծախք, նախ, զգեստ, բոխք		24,976.00			
Հանգանակութեան (Հիւս. Ամերիկա ներստայ)		152,359.00			
Պանդակներու ծախք		18,200.00		3,250.00	
Նախնական երկու տարիներու անցագին		150,000.00			
Գործերու փոխարժէք և տարածում		69,135.00			
Պարտաւարան փոխանցում		2,519,399.00			
ԸՆԴՀԱՆՈՒՆՈՒՆ — Մօնթէվիտօ					30,000.00
ԻՐԱՆԻԱԿԱՆ					
Հանգանակութեան բնոյժ. արդիւնք	47,195.00		4,060.00		
Նշ					
Ման ծախքեր ի Մօնթէվիտօ		633.00		60.00	
Պարտաւարան փոխանցում		46,562.00			4,000.00
ԶԻՆ — Ման Տիպի					
ԻՐԱՆԻԱԿԱՆ					
Հանգանակութեան բնոյժ. արդիւնք	1,544,000.00		1,080.00		
Նշ					
Ման ծախքեր ի Զիւն		37,000.00			
Պարտաւարան փոխանցում		1,507,000.00		30.00	1050.00
ՎԵՆԵԶՈՒԵԼԱ — Դարագոս					
ԻՐԱՆԻԱԿԱՆ					
Հանգանակութեան բնոյժ. արդիւնք	38,038.00		8,378.41		
Նշ					
Նուստային Պարտաւարան զրկում		38,038.00			8,378.41
ՊԵՆՏԻԼ — Ման Փալո					
ԻՐԱՆԻԱԿԱՆ					
Հանգանակութեան բնոյժ. արդիւնք	2,724,998.00		8,335.00		
Նշ					
Պարտաւարան մը, հանգանակութեան և		99,250.00		350.00	
Ման ծախքեր ի Ս. Փալո					
Հիւս. Ամերիկայի մէջ կատարուած ծախքեր		185,998.00		560.00	
Գործ. Տ. Բարդէն Ա. ի զան		184,000.00		500.00	
Պարտաւարան փոխանցում		2,255,750.00			6,925.00
Հարստ. Ամերիկայէն զրկում արտաբերուած արժէք			3,600.00		3,600.00
Հիւս. Ամերիկայէն նուիրակութեան Ս. Բարդէն- չափ Վարտաւարան համար			2,800.00		2,800.00
Հանգանակութեան բնոյժ. արդիւնք Ամերիկայէն Տոյարով			61,503.41	4,750.00	56,753.41

զաղաթներու մէջ (սւր չաւնինք նայնիակ շրջան չաղ. չաղիւ) թէ ինչպէս մտառող տերունիքը բարբառովին մտացած է ազգութիւն, եկեղեցի և լիզուել նաւերակ մեր կրօնաւորներուն սրտեռանդն ճիգերը, պիտի փրկեն մեզ մեր կարանքներէն, ու առար համար «աչք ամենեցուն ի մեզ հային», մանաւանդ այս օրերուն սւր անկրօն և աղարարոյ հազիններ, անխղճօրէն պատակած են մեր եկեղեցին, Հայ երուսաղէմի կրօնաւորներուն կը վիճակուի մեր ժողովուրդին «նշխարեալ բեկորներուն» ի մի հաւաքելու սուրբ կոչումը:

Մեր տեղեկագիրը փակելէ առաջ քանի մը խօսք ալ Հարաւային Ամերիկայէն մեր վերադարձին, Հիւս. Ամերիկայի մէջ մեր սենեցած գործունէութեան:

Աւարտած ըլլալով Հարաւ. Ամերիկայի նաւերակութեան մեր գործը, 1962 Յունիս 1ին մտանք Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Հոն ստացանք Զերդ Սրբազնութեան հրահանգը, մեր սիրելի եղբայրակցին՝ Հոգչ Տ. Շահէ վրդ. Աճէմեանի հետ ձեռնարկելու Ս. Յարութեան Տաճարի անյետաձգելի և կարեւոր հանդանակութեան: Մինչև հանդանակութեան սկզբնաւորութիւնը (1963 Յունուար 1) շրջեցանք Հայց. եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան թիմի ծախերուն մեծամասնութիւնը, մեզի առաջադրութիւն սեննալով դասախօսութիւններով, քաւրդխօսութիւններով և մամուլով նախապատրաստել սոյն հանդանակութեան համար նպատասար գետին, ու դարմանել անցեալի վրդովմանքը մեր ժողովուրդին: Այս նպատակաւ աւելինք 35 դասախօսութիւններ: Առկէ յետոյ, 1963 Յունուար 1ին, Ամենայն Հայոց Սրբազնագոյն և վեհափառ կաթողիկոսի բարձր անօրինութեամբ՝ սկսանք Ս. Յարութեան Տաճարի նորագութեան հանդանակութեան գործին, ինչ որ նիւթն է առանձինն տեղեկագիրի:

Այս առթիւ ուրախութեամբ հաստատեցինք թէ Հիւս. Ամերիկայի Հայց. եկեղեցւոյ թիմին մէջ, Հոգ. չաղիւներու անցեալի սուր կարիքը մեղմացած է, ու մօտ կը թուի ժամանակը, երբ մեր բոլոր ծախերը պիտի սեննան իրենց Հոգ. Հա-

ղիւնները: Ամերիկահայեր կերտած են բազմաթիւ եկեղեցիներ սրպէս վաւարան իրենց հոգեւոր և ազգային զոյաւթեան, և սակայն սրաի ճմլումով կարելի է նշել այդ եկեղեցիներու քովիլը ամբողջօրեայ հայ դպրոցներու բացակայութիւնը, ու աւելի ցուելին՝ տարածուած մտայնութիւնը թէ Ամերիկահայերու համար չառ ալ անհրաժեշտ չեն հայկական դպրոցներ և հաւեարար այդ ուղղութեամբ ոչ մէկ քայլ առնուած է ու կ'առնուի: Այս պայմաններէն սկսած են օգտուիլ Հոգովմեական Հայ եկեղեցականներ՝ մեր ժողովուրդին իսկ նաւերատաւութիւններով իրենց բանալիք դպրոցներուն մէջ, մեր գաւակները առաջնորդելու դէպի մեր Ս. եկեղեցիին խորթ և օտարտի սուսցումները:

Ժամանակն է որ մտածենք մեր Ընծայարանին մէջ պատրաստուած նոր եկեղեցականներով ստանձնել Ամերիկահայոց կրթական նոր գործին նախաձեռնութիւնը: Առար համար վստահելիք, նիւթական և բարբայական միջոցներ չեն պակսիր Ամերիկահայոց մէջ: Այս ձեռով թէ՛ օգտակար հանգիստացած պիտի ըլլանք մեր ժողովուրդին, և թէ մեր Ընծայարանի նաւերուած և երիտասարդ հոգիներուն բացած պիտի ըլլանք նոր տեսլականներ, կրկնապատկելով իրենց խանգովառութիւնը հանգէպ իրենց ասպարէզին:

Մեր տեղեկագրին առիթով կը փութանք մեր զգածուած շնորհակալութիւնները յայտնել այն բոլոր բարի և ազնիւ հոգիներուն, որոնց աջակցութիւնները ապահովեցին մեր նաւերակութեան գործին արդիւնաւորութիւնը:

Շնորհակալութեան արտաքին պարագ սենինք մեր եկեղեցւոյ Գերագոյն Պետին, Ամենայն Հայոց Սրբազնագոյն Հայրապետին, որուն Գերշ. Տ. Բարգէն Սրբազանի միջոցաւ յղած յաջողութեան և օրհնութեան հաւագիրը եղաւ մեր գործին խանգովառ սկզբնաւորութիւնը: Ս. էջմիածնի օրհնութեամբ ծաղկեցաւ մեր գործը:

Շնորհակալութիւն Հարաւային Ամերիկայի Հայոց Պատուիրակ Գերշ. Տ. Բար-

գէն Ս. Եղս. Ապտտեանին, որ առաջին իսկ օրէն շատ սրտագին և հղթարական ընդունելութեան առարկան ըրաւ մեզ: Ս. Աթոռին Միաբանի մը վայել նախանձախնդրութեամբ, բանիւ և գործով բերաւ իր անվերապահ աջակցութիւնը մեր նուիրակութեան գործի արդիւնաւորութեան: Ու մենք ուրախութեամբ ողջունեցինք իր մէջ Աթոռատէր եկեղեցականին հետ նաեւ Հայց. Եկեղեցւոյ օգտակար պաշտօնեան, որ մեր Եկեղեցւոյ ներկայ գծաւորին պայմաններուն մէջ, խոհեմ կենցաղավարութեամբ, կարեւոր թեմէ մը ներս պահած է ներդաշնակութիւնը ու շահած սէրն ու համակրանքը բոլորին:

Որքան արդար էր Զերդ Բարձր Սըրբազնութեան բարեհաճ կարգադրութիւնը, որով Տ. Բարգէն Սըրբազան այսօր անգամ մը ևս մաս կը կազմէ Ս. Յակոբեանց Միաբանական Ուխտին, որը անցեալի անհեռառու և անտեղի սխալի մը սրբազրութեանէն աւելի՝ գնահատութիւնն է Գերշ. Սըրբազանին Ս. Աթոռոյ նկատմամբ ունեցած սիրոյն ու նուիրումին:

Շնորհակալութիւն Արժանթիին և Պրազիլի Թեմական Խորհրդոց անդամներուն, Մօնթէվիդէոյի, Գօթապոլսի, Չիլիի, Ռիօ տէ Ժանէրայի, Ռօսարիոյի, Գարապատի Եկեղեցական Խորհուրդներուն, Պատաւական Հոգեւոր Հովիւներուն, Հայկական Մամուլի բոլոր ներկայացուցիչներուն,

Հայկական բոլոր Ռատիօկայաններու վարչութեանց և Հայց. Եկեղեցւոյ այն բոլոր ազնիւ զաւակներուն, որոնք պահ մէկդի դրած իրենց ասօրեայ աշխատանքներն ու մտահոգութիւնները, տուն առ տուն առաջնարդեցին մեզ, բազմապատիկ արդիւնաւորելով Ս. Գլխադրի նուիրահաւաքութիւնը:

Շնորհակալութիւն Հորաւ. Ամերիկայի մեր բովանդակ գահաբերող ժողովուրդին, որ Հայկ. Երուսաղէմի Առաք. Ս. Աթոռին կոչին ընդառաջեց ու Աստուծոյ և Ս. Երուսաղէմի փառքին համար, բարեպաշտիկ և ազգանուէր ապրումներով բերաւ իր ընծան ու արգասիքը:

Շնորհակալութիւն Զերդ Բարձր Սըրբազնութեան և Ս. Աթոռոյ Ամեն. Գահակալիդ, որ մեր ակար ուժերուն վստահեցաք այս գործին յանձնառութիւնը: Զերդ Սըրբազնութեան վստահութիւնն ու Հայրական սէրը հղաւ մղիչ սլօք մեր ջանքերուն, որոնք ինչ կշիռով ալ որ արժեւորէք և սակայն կրնաք անվերապահ վստահութիւնը ունենալ թէ Ս. Աթոռոյ հոգեւոր, բարոյական և նիւթական վարկին համար չխնայեցինք սրեւէ աշխատանք:

Մեր գործի աւարտին գահութիւն Աստուծոյ, իբրեւ շնորհատուն ամենայն բարեաց, և որուն աստուածային հովանին կը հայցենք մեր Եկեղեցւոյ նուիրաբերող պատուական զաւակներուն:

Մտաշելով ի համարայր Սըրբազնութեանդ Աջոյն

Որդիական սիրով

ԿԻՒՐԵՂ ՎՐԴ. ԴԱՅԻԿԵԱՆ

Նուիրակ Ս. Արոսոյն Երուսաղէմի ի Հաւաւային Ամերիկա

15 Յունիս 1963

Ս. Արոս — Երուսաղէմ